

կենցաղին, խղճին եւ տուեալ իրավիճակին, որ մանրամասն վերլուծման պէտք է ենթարկուի: Այս իմաստով այլ օրինակ մը նշենք.- շատերու համար անձնական կեանքի պահպանումը աւելի բարձր բարոյական արժէք ունի, քան «մերձաւորի սէրը»:

Բարոյագիտական այս ուղղութեան համաձայն, բարոյական արժէքները կը վայելեն տեսակ մը իդէալական կեցութիւն, այլ խօսքով անոնք «իդէալ գոյ»-եր են եւ կարելի է զանոնք հայեցողութեան ենթարկել կամ զգալ: Այստեղ, թէեւ կը գերակշռէ յուզական ազդակը, սակայն բոլորովին ալ յստակ չէ՝ *հայեցողութեան ենթարկելուն եւ զգալուն* փոխ-յարաբերութիւնը:

Բարոյագիտական այս ուղղութեան հիմնադիրը կը նկատուի գերման հոգեբան փիլիսոփայ **Ֆ. Բրենտանօ** (Franz Brentano, 1838 – 1917 թ.), որմէ ետք, նշանաւոր դարձան գերման փիլիսոփաներ՝ **Մ. Շէլեր** (Max Scheler, 1874 – 1928 թ.) եւ **Ն. Հարտման** (Nicolai Hartmann, 1882 – 1950 թ.):

➤ **Ֆ. Բրենտանօ.-**

Փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն ուսանած Ֆ. Բրենտանօ, նախ կը ձեռնադրուի կաթոլիկ կղերական ապա կարգաթող ըլլալով կը նուիրուի հոգեբանութեան ու փիլիսոփայութեան, որոնք իր մօտ սերտօրէն առնչուած են:

Բարոյագիտութեան ոլորտի գլխաւոր երկը կը նկատուի 1889 թուականին հրատարակուած՝ *«Բարոյական իմացութեան ծագումը»* (գերմ. բնագիր՝ „Ursprung sittlicher Erkenntnis“, անգլ.՝ „The Origin of our Knowledge of Right and Wrong“): Նաեւ Բրենտանոյի սիւթական արժէքի բարոյագիտութիւնը կը յատկանշուի ձեւապաշտութեամբ (Formalism) կամ նուազագոյն ձեւա-կան սկզբունքներու օգտագործմամբ:

➤ **Մ. Շէլեր.-**

Ինչպէս նշեցինք (Էջ 108 եւ 110), Մ. Շէլեր Երեւութաբանութեան հետեւորդ մըն էր, սակայն իր կեանքի ու միտքի երկրորդ հանգրուանին ան բոլորովին նուիրուած էր փիլիսոփայական Մարդաբանութեան:

Բարոյագիտական իր գլխաւոր երկը կը նկատուի 1913 թուականին հրատարակուած՝ *«Ձեւապաշտութիւնը բարոյագիտութեան մէջ եւ սիւթական արժէքի բարոյագիտութիւնը»* (գերմ. բնագիր՝ „Der Formalismus in der Ethik und die materiale Wertethik“): Այստեղ, Շէլեր, կը քննադատէ Ի. Կանտի ձեւապաշտական բարոյագիտութիւնը եւ կը ներկայացնէ իր երեւութաբանական հիմք ունեցող՝ արժէքաբանական ուսմունքը: Շէլերի նպատակը զուտ բարոյական արժէքներն են, որոնք ի յառաջագունէ (a priori) Էութեան գաղափարներ են, անկախ հոգեբանական ու պատմական փորձառութիւններէն: Շէլերի համաձայն, բարոյական արժէքները ունին իւրայատուկ նուիրապետական կարգ եւ իւրաքանչիւր դրական արժէքի հանդիման կը յայտնուի բացասական արժէք մը: